Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am

ՎՃՌԵՑ

1. «Էլիքս» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ «Սպասարկում» ՊՈԱԿ-ի՝ «ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՊՈԱԿ-ի և «ԷԼԻՔՍ» ՍՊ ընկերության միջև 28.08.2023 թվականին կնքված թիվ «ՎԱՍՊ-ԳՀԾՁԲ-23/9» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու /վերացնելու/, պայմանագրի և որակավորման ապահովումների տուժանքով նախատեսված գումարների գանձմանն ուղղված գործընթացը դադարեցնելու, իսկ գումարների գանձված և/կամ վճարված լինելու դեպքում դրանք վերադարձնել պարտավորեցնելու պահանջների մասին, բավարարել մասնակի:

1.1. Անվավեր ճանաչել /վերացնել/ «ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՊՈԱԿ-ի և «ԷԼԻՔՍ» ՍՊ ընկերության միջև 28.08.2023 թվականին կնքված թիվ «ՎԱՍՊ-ԳՀԾՁԲ-23/9» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումը:

1.2. «Էլիքս» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ «Սպասարկում» ՊՈԱԿ-ի՝ «Սպասարկում» ՊՈԱԿ-ին պայմանագրի և որակավորման ապահովումների տուժանքով նախատեսված գումարների գանձմանն ուղղված գործընթացը դադարեցնելուն, իսկ գումարների գանձված և/կամ վճարված լինելու դեպքում դրանք վերադարձնելուն պարտավորեցնելու մասին, մերժել:

2. «Սպասարկում» ՊՈԱԿ-ից հօգուտ «Էլիքս» ՍՊ ընկերության բռնագանձել 30.000 (երեսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով, համարել լուծված:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

5. Վճիռը կամովին չկատարելու դեպքում, այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

6. Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ Արմինե Թումասյան

Digitally signed by
ARMINE TUMASYAN 7111860578
Date: 2024.07.17 15:02:53